ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 15 » նոյեմբեր 2018 թ No 2944 - Ա

ԱՆ ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԻ ԴԵՄ (ՎԱՔՍԻԳՐԻՊ) ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 17-ի նիստի N 10 արձանագրության 4-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N47 արձանագրային որոշման պահանջները՝ Հայաստանի Հանրապետությունում ռիսկի խմբերի՝ այդ թվում մանկական ազգաբնակչության, շրջանում սեզոնային գրիպի դեմ կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) «Սեզոնային գրիպի դեմ (Վաքսիգրիպ) պատվաստանյութի բաշխման ցանկն՝ ըստ Առողջապահության նախարարության ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղերի՝ համաձայն հավելված 1-ի:

2) «Սեզոնային գրիպի դեմ (Վաքսիգրիպ) պատվաստանյութի բաշխման ցանկն՝ ըստ Երևան քաղաքի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների»՝ համաձայն հավելված 2-ի:

3) Սեզոնային գրիպի դեմ (Վաքսիգրիպ) պատվաստանյութի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելված 3-ի:

2. ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանին, գլխավոր տնօրենի խորհրդական Իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար Գայանե Սահակյանին՝ սահմանված կարգով ապահովել.

1) ԱՆ Իմունականխարագելման ազգային ծրագրի շրջանակներում Առողջապահության նախարարության կողմից ձեռք բերված 60000 դեղաչափ (60000 ներլցված ներարկիչ) սեզոնային գրիպի պատվաստանյութի ընդունումը և պահեստավորումը:

2) Տրամադրել պահեստավորված սեզոնային գրիպի պատվաստանյութից 8000 դեղաչափ Պաշտպանության նախարարության ռազմաբժշկական վարչությանը:

3) Տրամադրել 1300 դեղաչափ սեզոնային գրիպի (Վաքսիգրիպ) պատվաստանյութ Արցախի Հանրապետության Առողջապահության նախարարությանը:

4) Բաշխել պահեստավորված սեզոնային գրիպի դեմ (Վաքսիգրիպ) պատվաստանյութից 45700 դեղաչափը ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղերին՝ համաձայն հավելված 1-ի և Երևան քաղաքի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին՝ համաձայն հավելված 2-ի:

5) Պահեստավորել 5000 դեղաչափ սեզոնային գրիպի (Վաքսիգրիպ) պատվաստանյութ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի պատվաստանյութերի պահեստում:

6) Ապահովել մարզերում ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի կողմից պատվաստանյութի բաշխումը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին՝ ըստ բաշխման ցուցակի:

7) Իրականացնել ամենօրյա մշտադիտարկում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող գրիպի դեմ կանխարգելիչ պատվաստումների գործընթացի նկատմամբ, ամփոփել և ներկայացնել սեզոնային գրիպի դեմ պատվաստումների և անբարեհաջող դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն Առողջապահության նախարարի 2018 թվականի նոյեմբերի 01-ի N 2798 - Ա հրամանի հավելված 4-ի:

8) Ապահովել ազգաբնակչության շրջանում սեզոնային գրիպի և սուր շնչառական վարակների, ինչպես նաև սեզոնային գրիպի դեմ պատվաստումների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքները:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետարանի առողջապահության, մարզպետարանների առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետերին, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տնօրեններին (համաձայնությամբ)՝ սահմանված կարգով.

1) Հայաստանի Հանրապետությունում կազմակերպել և իրականացնել կամավոր սկզբունքով պետական պատվերի շրջանակներում սեզոնային գրիպի դեմ պատվաստումներ Վաքսիգրիպ պատվաստանյութով ռիսկի խմբերի՝ մանկական ազգաբնակչության (6 ամսականից մինչև 5 տարեկան ազգաբնակչություն, փակ կոլեկտիվներում գտնվող անձինք՝ մանկատան սաներ և սպասարկող անձնակազմ, դպրոց-ինտերնատների աշակերտներ և սպասարկող անձնակազմ), հղիների, քրոնիկ հիվանդների (շնչառության օրգանների, սիրտ-անոթային համակարգի, շաքարային դիաբետով, լյարդի, երիկամների քրոնիկ հիվանդություններով հիվանդներ), 65 տարեկանից բարձր տարիքի անձանց, մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, թերապևտների, բուժքույրերի, ընդունարանի, շտապ օգնության, վերակենդանացման, քիթ-կոկորդ-ականջի բաժանմունքների բուժանձնակազմի, համաճարակաբանների և համաճարակաբանի օգնականների, 2019թ. առաջին զորակոչի ենթակա անձանց, տարեցների և հաշմանդամների խնամքի կազմակերպություններում, հոգեկան առողջության կենտրոններում գտնվող անձանց և սպասարկող անձնակազմի շրջանում:

2) Ապահովել ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի կողմից կցագրված ռիսկի խումբ ունեցող կազմակերպություններում սեզոնային գրիպի դեմ արտագնա պատվաստումների կազմակերպումը և իրականացումը՝ համաձայն Առողջապահության նախարարի 2018 թվականի նոյեմբերի 01-ի N 2798 - Ա հրամանի հավելված 6-ի:

3) Ապահովել ռիսկի խմբերի շրջանում կատարված պատվաստումների ու արձանագրված հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վերաբերյալ ամենօրյա, ինչպես նաև մինչև 2019 թվականի հունվարի 15-ն ամփոփ տեղեկատվության ներկայացումը Առողջապահության նախարարության ՀՎԿԱԿ

ՊՈԱԿ-ի մասնաճյուղերին՝ համաձայն Առողջապահության նախարարի 2018 թվականի նոյեմբերի 01-ի N 2798 - Ա հրամանի հավելված 4-ի:

4) Ապահովել բնակչության շրջանում սեզոնային գրիպի և սուր շնչառական վարակների, ինչպես նաև սեզոնային գրիպի դեմ պատվաստումների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքները:

5) Ապահովել բժշկական կամ այլ կազմակերպությունների ժամանակավոր պատվաստումային կետերում պատվաստումների կազմակերպումը և իրականացումը՝ համաձայն Առողջապահության նախարարի 2018 թվականի նոյեմբերի 01-ի N 2798 - Ա հրամանի հավելված 6-ի:

4. Առողջապահության նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի պետ Մանյա Մխիթարյանին՝ սահմանված կարգով ապահովել.

1) ԱՆ Իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում Առողջապահության նախարարության կողմից ձեռք բերված 60000 դեղաչափ (60000 ներլցված ներարկիչ) սեզոնային գրիպի պատվաստանյութի հանձնումը Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և փաստաթղթային ձևակերպումները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված 1

Առողջապահության նախարարի
2018 թվականի նոյեմբեր 15 - ի N 2944 - Ա հրամանի

Ց Ա Ն Կ

ՍԵԶՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԻ ԴԵՄ (ՎԱՔՍԻԳՐԻՊ) ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՄԱՆ՝ ԸՍՏ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-Ի ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ

Հ/Հ	ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղ	Պատվաստանյութի դեղաչափ
1	«Արագածոտն»	2507
2	«Արարատ»	5000
3	«Արմավիր»	5000
4	«Գեղարքունիք»	4000
5	«Լոռի»	5000
6	«Կոտայք»	5500
7	«Շիրակ»	5000
8	«Սյունիք»	2590
9	«Վայոց ձոր»	1500
10	«Տավուշ»	2600
	ԸՆԴԱՄԵՆԸ	**38697**

Հավելված 2

Առողջապահության նախարարի
2018 թվականի նոյեմբեր 15-ի N 2944-Ա հրամանի

Ց Ա Ն Կ

ՍԵԶՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԻ (ՎԱՔՍԻԳՐԻՊ) ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՄԱՆ՝ ԸՍՏ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	ք. Երևանի բժշկական կազմակերպություններ	Պատվաստանյութի դեղաչափ
1	«Նաիրի ԲԿ» ՓԲԸ	23
2	«Արամյանց ԲԿ» ՓԲԸ	60
3	«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ	29
4	«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	50
5	ԵՊԲՀ ՊՈԱԿ «Հերացի» համալսարանական պոլիկլինիկա	120
6	«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ	200
7	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	50
8	«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	20
9	«Արինտերլև» ՍՊԸ «Վարդանանց նորարարական ԲԿ»	110
10	«Ս.Աստվածամայր ԲԿ» ՓԲԸ-ի «Արտաշիսյան» պոլիկլինիկա	330
11	«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ	210
12	«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	130
13	«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ	200
14	«Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ	100
15	«Նոր Արեշ պոլիկլինիկա» ՓԲԸ	280

16	«Սարի-թաղ պոլիկլինիկա» ՓԲԸ	120
17	ԵՊԲՀ ՊՈԱԿ «Մուրացան» համալսարանական պոլիկլինիկա	200
18	«Էրեբունի ԲԿ» ՓԲԸ պոլիկլինիկա	200
19	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ	200
20	«Գ.Նարեկացի ԲԿ» ՓԲԸ	100
21	«Թիվ 9 պոլիկլինիկա» ՓԲԸ	180
22	«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ	300
23	«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ	200
24	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ Աստղիկ ԲԿ պոլիկլինիկա	120
25	«Կարմիր բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ	150
26	«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ	200
27	«Արմենիա ՀԲԿ» ՓԲԸ պոլիկլինիկա	300
28	«Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտ» ՓԲԸ	70
29	Իգնացիա ԲԿ ՍՊԸ	100
30	Էլեն-Նարե ծննդ. Կենտրոն	40
31	Սուրբ Աստվածամայր ԲԿ ծննդ.	10
32	Ճառագայթային բժշկության և այրվածքների ԳԿ	12
33	«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ	300
34	«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ	350
35	«Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ	400
36	«Ս.Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ	450
37	«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ	35

38	Արթ-Մեդ ԲԿ ՍՊԸ	30
39	Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ	100
40	Նարկոլոգիական ՀԿ ՓԲԸ	4
41	Հակատուբերկուլոզային դիսպանսեր	30
42	Պրոֆ. Յոլյանի անվ. Արյունաբանության կենտրոն	20
43	Սլավմեդ ԲԿ ՍՊԸ	10
44	Իզմիրլյան ԲԿ	100
45	Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն	30
46	«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ	150
47	«Արաբկիր» մանկական պոլիկլինիկա ՓԲԸ	200
48	«Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ	60
49	«Նոր Արաբկիր ԱԿ» ԴՓԲԸ	100
50	«Կ.Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	200
51	«Բժշկուհի Բադանյան» ՍՊԸ	20
	ԸՆԴԱՄԵՆԸ	7003

Հավելված 3
Առողջապահության նախարարի
2018 թվականի նոյեմբեր 15 - ի N 2944 - Ա հրամանի

ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ՍԵԶՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԻ ԴԵՄ (ՎԱՔՍԻԳՐԻՊ) ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ

Ի՞նչ է Վաքսիգրիպը և ո՞ր դեպքերում է օգտագործվում

Վաքսիգրիպը պատվաստանյութ է գրիպի դեմ: Նախատեսված է պատվաստումից հետո 2-3 շաբաթվա ընթացքում պատվաստանյութի բաղադրության մեջ մտնող վիրուսի երեք շտամներից պաշտպանելու համար: Գրիպի գաղտնի շրջանը մի քանի օր է, ուստի եթե պատվաստում ստացած անձը վարակվել է գրիպով պատվաստումից անմիջապես առաջ կամ հետո, հիվանդությունը կարող է զարգանալ: Պատվաստանյութը չի պաշտպանում մրսածությունից, որի ախտանշանները նման են գրիպի ախտանշաններին:

Ինչ տեղեկատվություն պետք է ստանալ Վաքսիգրիպով պատվաստվելուց առաջ

Համոզված լինելու համար, որ Վաքսիգրիպով պատվաստումը թույլատրվում է, կարևոր է տեղեկացնել բժշկին, եթե պատվաստվողի մոտ առկա է.

- ալերգիա (գերզգայուն) ակտիվ նյութի կամ պատվաստանյութի բաղադրիչներից որևէ մեկի, շատ քիչ քանակությամբ պարունակվող բաղադրիչների, օրինակ ձվի (օվալբումին կամ հավի պրոտեին), նեոմիցինի, ֆորմալդեհիդի կամ օկտոքսինոլ-9-ի նկատմամբ:
- միջին կամ բարձր ջերմությամբ ուղեկցվող կամ սուր հիվանդություն: Այս դեպքում պատվաստումը պետք է հետաձգվի մինչև առողջացումը:

Նախազգուշացումներ և վերապահումներ.

Պատվաստվելուց առաջ տեղեկացնել բժշկին.

- թույլ իմունային պատասխան ունենալու մասին (իմունադեֆիցիտի կամ իմունային համակարգը ճնշող դեղորայքի ընդունման),
- արյան մակարդելիության խանգարումներով ուղեկցվող հիվանդության առկայության կամ կապտուկների առաջացման հակվածության վերաբերյալ:
- եթե գրիպի դեմ պատվաստմանը հաջորդող օրերի ընթացքում ինչ որ մի պատճառով պատվաստում ստացողը պետք է արյան անալիզ հանձնի: Իրականում վերջին շրջանում պատվաստում ստացած որոշ հիվանդների մոտ կեղծ դրական թեսթեր են դիտվել:

Բոլոր պատվաստանյութերի նման Վաքսիգրիպը նույնպես չի կարող ամբողջությամբ պաշտպանել բոլոր պատվաստվածներին:

Այլ դեղամիջոցները և Վաքսիգրիպը

- Վաքսիգրիպը կարող է կատարվել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ, բայց տարբեր տեղերում:
- Իմուն պատասխանը կարող է նվազել իմունասուպրեսանտներով բուժման դեպքում, ինչպիսիք են կորտիկոստերոիդները, ցիտոտոքսիկ դեղամիջոցները կամ ճառագայթային բուժումը:

Հղիությունը և կրծքով կերակրումը

Գրիպի դեմ պատվաստանյութերը կարող են օգտագործվել հղիության բոլոր փուլերում: Ամբողջ աշխարհում գրիպի ինակտիվացված պատվաստանյութերի օգտագործման հետևանքով չեն արձանագրվել պատվաստանյութով պայմանավորված աննորմալ ելք պտղի կամ մոր համար:

Վաքսիգրիպը կարող է օգտագործվել կրծքով կերակրման ժամանակ: Վաքսիգրիպով պատվաստվելու ենթակայությունը որոշում է բժիշկը:

Փոխադրամիջոցի կամ մեքենայի վարումը

Վաքսիգրիպը չունի ոչ մի ազդեցություն կամ որևէ աննշան ազդեցություն մեքենա վարելու ունակության վրա:

Վաքսիգրիպում կալիումի և սոդայի պարունակությունը

Այս պատվաստանյութի յուրաքանչյուր դեղաչափում պարունակվում է 1 մմոլ-ից պակաս կալիում (39 մգ) և սոդա (23 մգ), այսինքն գործնականում կարելի է համարել, որ չի պարունակում կալիում և սոդա:

Ինչպես օգտագործել Վաքսիգրիպը

Դեղաչափը

Մեծահասակները ստանում են մեկ դեղաչափ՝ 0.5 մլ:

Օգտագործումը երեխաների մոտ.

- Սկսած 36 ամսականից երեխաները ստանում են մեկ դեղաչափ՝ 0.5 մլ:
- 6 ամսականից մինչև 35 ամսական երեխաների համար մեկ դեղաչափը 0.25 մլ է: Եթե ազգային ուղեցույցները թույլ են տալիս, որպես մեկ դեղաչափ կարող է ներմուծվել 0.5մլ:

Եթե երեխան 9 տարեկանից փոքր է, և նախկինում չի պատվաստվել գրիպի դեմ, 4 շաբաթ ընդմիջումից հետո պետք է ներարկվի երկրորդ դեղաչափը:

Ներարկման ձևը

Ներմուծվում է միջմկանային կամ խորը ենթամաշկային ներարկման ձևով:

Ալերգիկ ռեակցիաներ

Անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկի, եթե պատվաստվողի մոտ առկա է.

- Ծանր ալերգաբանական ռեակցիա.
  - Անհետաձգելի բժշկական վիճակ է, որը կարող է ուղեկցվել արագ մակերեսային շնչառությամբ, սրտի ռիթմի արագացմամբ, դանդաղ

անոթազարկով, մաշկի սառնությամբ և խոնավությամբ, գլխապտույտներով, որոնք կարող են առաջացնել ուշագնացություն (շոկ),

- գլխի, պարանոցի, դեմքի, շրթունքների, լեզվի, կոկորդի վրա կամ մարմնի այլ տեղում տեղակայված ուռուցքի դեպքում, որը կարող է դժվարացնել կլման ակտը կամ շնչառությունը:

- Ալերգիկ ռեակցիաներ, ինչպիսիք են մաշկային ռեակցիաները, որոնք կարող են տարածվել ամբողջ մարմնի վրա, ներառյալ քորը, ցանը, բծերը, կարմրությունը (էրիթեմա):

Այս անցանկալի երևույթները հազվադեպ են լինում (կարող են առաջանալ 1000 պատվաստվածներից մեկի մոտ), բացի ցանից, որը մի քիչ հաճախակի է լինում 3-8 տարեկան երեխաների մոտ (100 պատվաստվածից մեկի մոտ):

Հաղորդված այլ անցանկալի երևույթներ

Շատ հաճախ (կարող է լինել 10 պատվաստվողներից մեկից ավել անձանց մոտ) մեծահասակների և տարեցների մոտ արձանագրվում է.

- Գլխացավեր,
- Մկանային ցավեր,
- Անհանգստություն, հոգնածություն, անսովոր թուլություն,
- Ներարկման տեղում ռեակցիաներ, ցավ, կարմրություն, այտուցվածություն, կոշտություն:

Շատ հաճախ (կարող է լինել 10 պատվաստվողներից մեկից ավել անձանց մոտ) մանկական ազգաբնակչության (6 ամսականից մինչև 17 տարեկաններ) մոտ արձանագրվում է.

- Գլխացավ, անսովոր լաց, գրգռվածություն, քնկոտություն,
- Մկանային ցավեր,

- Լուծ,
- Ախորժակի վատացում կամ բացակայություն,
- Անհանգստություն, տենդ, սարսուռ,
- Ներարկման տեղում ռեակցիաներ, ցավ, կարմրություն, այտուցվածություն, կոշտություն, քոր:

Հաճախ (կարող է լինել 10 պատվաստվողներից մինչև մեկ անձի մոտ) մեծահասակների և տարեցների մոտ արձանագրվում է.

- Հոդացավեր,
- Քրտնարտադրության ուժեղացում,
- Ներարկման տեղում ռեակցիաներ, կապտուկներ, քոր,
- Սարսուռ, տենդ, անհանգստություն, անսովոր հոգնածություն կամ թուլություն:

Հաճախ (կարող է լինել 10 պատվաստվողներից մինչև մեկ անձի մոտ) մանկական ազգաբնակչության մոտ արձանագրվում է.

- Գլխապտույտ,
- Անքնություն,
- Փսխում,
- Տենդ, սարսուռ,
- Ներարկման տեղում ռեակցիաներ. Կապտուկներ, քոր, անհարմարավետություն, կոշտություն, տաքություն:

Քիչ հաճախ (կարող է լինել 100 պատվաստվողներից մինչև մեկ անձի մոտ) մեծահասակների և տարեցների մոտ արձանագրվում է.

- Պարանոցային, թևատակերի և աճուկային հանգույցների մեծացում,

- Քնկոտություն, գլխապտույտ,
- Սրտխառնոց, լուծ,
- Կեղծ գրիպի համախտանիշ,
- Ներարկման տեղում ռեակցիաներ. Անհարմարավետություն, ջերմության զգացողություն:

Քիչ հաճախ (կարող է լինել 100 պատվաստվողներից մինչև մեկ անձի մոտ) մանկական ազգաբնակչության մոտ արձանագրվում է.

- Պարանոցային, թևատակերի և աճուկային հանգույցների մեծացում,
- Լուծ,
- Ներարկման տեղում ռեակցիաներ. Արյունազեղումներ, ջերմության զգացողություն:

Հազվադեպ (կարող է լինել 1000 պատվաստվողներից մինչև մեկ անձի մոտ) մեծահասակների և տարեցների մոտ արձանագրվում է.

- Թմրածություն կամ պարեսթեզիաներ, զգացողության նվազեցում (հիպոէսթեզիաներ), բազուկների ցավ և թուլություն (բազկային ռադիկուլիտ), նևրալգիաներ
- Պարանոցային, թևատակերի և աճուկային հանգույցների մեծացում:

Անորոշ հաճախականությամբ (չի կարող գնահատվել տրամադրված տվյալների հիման վրա)

- Պարանոցային, թևատակերի և աճուկային գեղձերի մեծացում,
- Թմրածություն կամ պարեսթեզիաներ,
- Նևրալգիաներ,
- Ցնցումներ,

- Նյարդաբանական խանգարումներ, որոնք կարող են արտահայտվել պարանոցի ձգվածությամբ, շփոթվածությամբ, թմրածությամբ, մարմնի ցավով, թուլությամբ, հավասարակշռության կորստով, ռեֆլեքսների կորստով, ամբողջ մարմնի կամ մարմնի մի կեսի կաթվածով (էնցեֆալոմիելիտ, նևրիտ, Գիեն Բարեի համախտանիշ),

- Արյունատար անոթների բորբոքում (վասկուլիտ), որոնք կարող են արտահայտվել մաշկի ցանավորմամբ, երիկամային խանգարումներ,

- Արյան որոշ տարրերի թվի ժամանակավոր նվազում (թրոմբոցիտոպենիա):

Անցանկալի երևույթները հիմնականում արտահայտվում են պատվաստմանը հաջորդող երեք օրերի ընթացքում, և անցնում են 1-3 օրվա ընթացքում առանց բուժման:

Ինչպես պահել Վաքսիգրիպը

- Պահել երեխաների համար անհասանելի տեղում:

- Չօգտագործել պատվաստանյութը պիտանելիության ժամկետի ավարտից հետո, որը նշված է տուփի վրա: Պիտանի է օգտագործման մինչև ժամկետում նշված ամսվա վերջին օրը:

- Պահպանել սառնարանում՝ +2°C-ից +8°C ջերմաստիճանի պայմաններում: Պատվաստանյութը չսառեցնել: Ներարկիչը պահել իր փաթեթի մեջ, լույսից պաշտպանելու նպատակով:

Ինչ է պարունակում Վաքսիգրիպը

Ակտիվ նյութերն են 0.5 մլ-ում՝ մեկ դեղաչափում. գրիպի վիրուսի (ինակտիվացված, մասնատված), հավի ձվի էմբրիոնի վրա աճեցված հետևյալ հարուցիչները.

A/Միչիգան/45/2015 (H1N1) PDM 09 – նման լարվածություն (A/Միչիգան/45/2015, NYMC Էքս-275) ..... 15 միկրոգրամ HA

A/Հոնգ Կոնգ/4801/2014 (H3N2) – նման լարվածություն (A/Հոնգ Կոնգ/4801/2014, NYMC Էքս-263B)..... 15 միկրոգրամ HA

B/Բրիսբեյն/60/2008 – նման լարվածություն (B/Բրիսբեյն/60/2008, վայրի տեսակ)..... ..... 15 միկրոգրամ HA:

Այս պատվաստանյութը ունի ԱՀԿ-ի նախաորակավորում (հյուսիսային կիսագնդի համար) և համապատասխանում է Եվրամիության որոշմանը 2018-2019 սեզոնի համար:

Այլ բաղադրիչներն են. Նատրիումի քլորիդ, դեհիդրատացված նատրիումի ֆոսֆատ, կալիումի ֆոսֆատ, ջուր ներարկման համար:

Արտաքին փաթեթավորումը

Վաքսիգրիպի 1 տուփը պարունակում է 1, 10, 20 կամ 50 հատ 0.5 մլ ներարկչի մեջ ներլցված պատվաստանյութ, որը թեթևակի սպիտակավուն կախույթ է ներարկման համար:

Հետևյալ տեղեկատվություններ.

- Ինչպես բոլոր ներարկման ճանապարհով ներմուծվող պատվաստանյութերի համար, խորհուրդ է տրվում կիրառել պատշաճ դեղորայքային բուժում և հսկողություն եթե պատվաստանյութի ներմուծմանը հաջորդում է անաֆիլակտիկ ռեակցիա:
- Օգտագործելուց առաջ պատվաստանյութը պետք է բերվի շրջապատի ջերմաստիճանին:
- Օգտագործելուց առաջ թափահարել: Պատվաստանյութը չպետք է օգտագործվի, եթե կախույթի մեջ օտար մասնիկներ են երևում:
- Պատվաստանյութը չի կարելի խառնել այլ դեղորայքի հետ միևնույն ներարկչի մեջ:
- Պատվաստանյութը չի կարելի ներարկել ուղղակիորեն արյունատար անոթի մեջ:

Հրահանգ 6-35 ամսական երեխաներին մեկ դեղաչափ՝ 0.25 մլ ներարկման համար

Երբ 0.25 մլ դեղաչափը նշված է, 0.5 մլ ներարկչի ծավալի կեսը հեռացնելու համար ներարկիչը պետք է պահվի ուղղահայաց դիրքով, խցանի մխոցը պետք է սեղմել մինչև ներարկչի վրա նշված սև գծի ավարտը: Մնացած 0.25 մլ ծավալը պետք է ներարկվի: